որոնք բաց առած մի քանի քրդերենը մնացած-ների բնակիչները Ատրբէջանի թաթարներ են: Դոր-ա արևմտեան եղերքից հոսում է Մագու գետը, կամ Ագ-չայ, որ դուրս է գալիս Մագուայ ձորից:

Աւարայրի դաշտը գտնվում է 62° 30′, 62° 45′, 39° 0′, 38° 45′ լայնութեան և երկայնութեան աստիճանների տակ: Աւարայրի դաշտի շուրջը բնակվում են Ալալ-լահիք, կամ Գարադոյունցիք և թաթարներ, կազմելով մօտ տասն երեք գիւղեր, որոնց գլխաւոր տեղին է Ղարազեաղին: Այդ սրբազործած դաշտի վերայ այժմ ոչ մի հայ չէ ապրում:

Աւարայրի դաշտի միջից է անցնում Տղմուտ գետը, որ գլխաւորապէս սկսվում է Տաճկահայաստանի արևելեան սահմանագլխի Շաւարշ (Շաւարէշ) լեռների հարաւային կողմերից և հոսելով արևմուտքից դէպի արևելք, երկու հաւասար մասերի բաժանելով Աւարայրի դաշտը, Մարիքենդ գիւղի մօտ խառնվում է Կարմիր կամ Կոթուր գետին և նորա հետ թափվում է Երասխի մէջ Դարաշամ գիւղի մօտից:

Աւաջուղը ընկնում է 62° 0′ 61° 45′, 39° 30′, 39° 15′ լայնութեան և երկայնութեան տակ, 7240 ոտնաչափ բարձրութեան վերայ: Արևմուտքից սահմանակից Տաճկաստանի Զաղկոց (Ալատաղ) լեռան:

Աւաջուղը մի հրաշագեղ, գոգաձև հովիտ է, կարծես Գոգ-հովիտ գաւառի անուան կոչումը այդ հովտից առնուած լինի: Դորա վերայ շինված են